Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես սովորեցնել անձնավորումը Միսաք Մեծարենցի չափածոյի միջոցով

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Դարբինյան՝հայոց լեզվի և գականության ուսուցչուհի
Դպրոց՝ << Հակոբ Կոջոյան >> կրթահամալիր

Բովանդակություն

1. Ներածություն 1
2. Գլուխ 1- Խնդրի ներկայացում 4
3. Գլուխ 2- Ստորոգյալով և բայական անդամի լրացումներով արտահայտվող անձնավորում 11
4. Գլուխ3-Գոյական անդամի լրացումներով արտահայտվող անձնավրում 16
5. Գլուխ 4-Կոչականով անձնավորում Անձնավորման այլ ձևեր . . . 20
6. Անձնավորման այլ ձևեր 21
7. Վերջաբան 23
8. Օգտագործված գրականության ցանկ 25

Ներածություն

Այս տարվա <<Հայոց լեզու>> առարկայի կենտրոնացված քննությունից հետո, որտեղ կային վիճելի հարցեր գեղարվեստական պատկերավորման միջոցների շուրջ, ես որոշեցի ուսումնասիրել և ներկայացնել հենց այս թեման, որպեսզի աշակերտներն առավել արդյունավետ յուրացնեն այն:Միսաք Մեծարենցի ստեղծագործությունները պատկերավորման այս միջոցն ուսումնասիրելու լավագույն օրինակներն են, որովհետև հեղինակն իրը, երևույթը, բնության ցանկացած շարժում պատկերավոր դարձնելու համար, գործածել է անձնավորման բոլոր տեսակները՝ սկսած լեզվական ամենատարբեր միջոցներից մինչև գաղափարական ձևեր:

<<Ինչպես սովորեցնել անձնավորումը Միսաք Մեծարենցի չաածոյի միջոցով>> թեմայի նպատակն է՝ լեզվական նյութը կրկնելով՝ սովորել անձնավորումը: Երկրորդ կարևոր հանգամանքը միջառարկայական սերտ կապի ապահովումն է, քանի որ պատկերավորման միջոցները և՛ լեզվական,և՛ գրականագիտական կատեգորիաներ են, և աշակերտները, վերհիշելով ձևաբանություն և շարահյուսություն բաժինները, տեքստից դուրս կբերեն անձնավորման օրինակները:

Մեր հետազոտական աշխատանքում կներկայացնենք անձնավորումը որպես պատկերավորման միջոց, նրա առաջացման նախադրյալներն ու ցարգացումը, կանդրադառնանք անձնավորման տարբեր դրսևորումներին, ինչպես նաև կներկայացնենք լեզվաբաների կարծիքը, թե ինչ դեր ու տեղ են հատկացնում այս միջոցին գեղարվեստական պատկերավորման միջոցների համայնապատկերում:

Գլուխ 1. Խնդրի ներկայացում

Ինչպես արդեն վերը նշել ենք,այս տարվա՝ 2022 թ., իններորդ դասարանի <<Հայոց լեզու>> առարկայի կենտրոնացված քննության առաջադրանքների մեջ կային վիճելի հարցեր նաև գեղարվեստական պատկերավորման միջոցների վերաբերյալ ,որոնք աշակերտներին շփոթության մեջ էին գցել: Աշակերտները պետք է կարճ պատասխանի ձևով հատվածից դուրս գրեին փոխաբերությունները: Առաջադրանքի համար տրված պատասխանը մասնագետների լայն շրջանում անհամաձայնություն առաջացրեց,քանի որ տեքստում կային մի քանի արտահայտություններ,բառեր ,որոնք կարող էին ճիշտ պատասխան համարվել,սակայն ԳԹԿ- ի կողմից դրանք չէին դիտարկվել և արդյունքում սովորողի գնահատականն իջնում էր՝ հակասելով նրա շահերին: Այսինքն ՝ աշակերտը առաջադրանքի պատասխանը ճիշտ գրել էր,սակայն միավոր չէր ստացել,քանի որ տրված պատասխանում այն չկար: Այս փաստը սովորող աշակերտների շրջանում հիասթափություն և անվստահություն առաջացրեց կրթական համակարգի նկատմամբ: Պետք է նշել նաև մեկ այլ կարևոր հանգամանք,այն է՝ուսուցչի նկատմամբ վստահության սասանումը,քանզի ուսուցչի սովորեցրածը ճիշտ չէին համարել: Ահա այս խնդիրներն էին ,որ մեզ մղեցին սույն աշխատանքը գրելուն,որպեսզի աշակերտները,իմանալով գեղարվեստական պաատկերավորման միջոցները, վստահ կարողանան նշել դրանք՝ համոզված լինելով իրենց իրավացիության և ստացած գիտելիքների հավաստիության մեջ:

Գրականության պատմության մեջ յուրաքանչյուր գրողի տեղն ու դերը որոշվում է նրա տաղանդով, մտածողության արտահայտման պատկերավորությամբ, հուզականությամբ, գրական գործի բովանդակության և ձևի ներդաշնակությամբ: Ստեղծագործողը, նամանավանդ բանաստեղծն, իր խոսքը կառուցում է նաև լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցների օգնությամբ, որոնք իրենց ամենաբազմազան դրսևորումներն ունեն:

Դարասկզբի արևմտահայ բանաստեղծությունը հարուստ է պատկերավորման միջոցներով: Դրանցում ուրույն տեղ ունի փոխաբերությունը՝ իր բազմապիսի տեսակներով:

Փոխաբերությունը նոր երևույթ չէր արևմտահայ գրականության մեջ և հաջող դրսևորումներ ունեցել էր Մ. Պեշիկթաշլյանի, Ղ. Ալիշանի, Պ. Դուրյանի բանաստեղծություններում, սակայն մի նոր մակարդակի հասավ դարասկզբին: Փոխաբերության նման զարգացումը կապված էր ինչպես ժամանակի գեղարվեստական մտածողության, այնպես էլ գրողի յուրօրինակ աշխարհայացքի հետ:

Փոխաբերությունը այլաբերության տեսակ է. բառերը գործածվում են ոչ ուղղակի իմաստով: Այսինքն՝ փոխաբերության հիմքում ընկած է երկու առարկաների, երևույթների նմանությունը կամ համեմատական լինելը: Սրա շնորհիվ գրողը մեկի անունը կամ հատկանիշը փոխարինում է մյուսի անվամբ կամ բնորոշ հատկանիշով: Այս առումով էլ փոխաբերությունը հաճախ անվանում են կրճատ կամ թաքնված համեմատություն[1]:

Արիստոտելը, խոսելով վեհ ու գեղեցիկ խոսք ստեղծելու մասին, բացառիկ տեղ է հատկացրել փոաբերությանը և այն գրողի անհատականության և տաղանդի չափանիշ է համարել. <<Պոեզիայի բոլոր գեղեցկություններից միայն դա է, որ սովորել չի կարելի: Այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը>>[2]:

Անձնավորումը փոխաբերության տեսակ է, պատկերավորման եղանակ, որի օգնությամբ իրերին, երևույթներին, կենդանիներին վերնագրվում են մարդկային հատկանիշներ, այսինքն՝ առարկաներն հոգեկանացվում են: Սա փոխաբերության ամենատիպական ձևերից մեկն է, որը լայն տարածում գտավ Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Ռուբեն Սևակի և Միսաք Մեծարենցի չափածոյում: Այս եղանակը նրանց համար դարձավ գեղավերաստական մտածողության յուրահատուկ ձև, ինչի շնորհիվ փորձ էր արվում ավելի մոտեցնել մարդուն բնությանը և հակառակը:

Անձնավորումը կապվում է մարդկային հնագույն մտածողության հետ,ըստ որի՝ աստված ամենուր էր՝ բնության յուրաքնչյուր երևույթի մեջ,նրա բոլոր խորշերում: Այս է պատճառը,որ բնության տարբեր առարկաներին մարդկային հատկանիշներ են վերագրում, անձնավորում և պաշտում նրանց: Օրինակ. «Արևը ժպտում է», «Օրը մռայլվում է», «Ծովը ծիծաղում» և այլն:

---

[1] Տե՛ս, Լ.Եզեկյան, Ոճագիտություն, Երևան, 2003, էջ 345

[2] Տե՛ս Ս. Մելքոնյան,Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության,Երևան,1984,էջ 94

Գեղարվեստական գրականության մեջ բնության անձնավորման օրինակներ հանդիպում են դեռևս ժողավրդական բանահյուսության մեջ՝ Գողթան երգերում:Նշվածի վառ ապացույցն է «Վահագնի ծնունդը»ժողովրդական երգը.

Երկնէր երկին,
Երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.....[3]

Այնուհետև այս հնարանքը կիրառվել է Գրիգոր Նարեկաու,Ներսես Շնորհալու , Ռ. Պատկանյանի, Պ. Դուրյանի, Մ. Պեշիկթաշլյանի ստեղծագործություններում,սակայն նվազ չափով,քանի որ ժամանակի գլխավոր խնդիրն աշխարհաբարի՝ իբրև գրական լեզվի հաստատումն ու կանոնարկումն էր:

Արևմտահայ գրականության մեջ անձնավորումն առավել ցայտուն դրսևորվեց Միսաք Մեծարենցի չափածոյում: Ոճական այս հնարանքը Մեծարենցի ստեղծագործության առանցքն է: Բանաստեղծը պաշտում է բնությունը, ձգտում հասնել և ձուլվել նրան.<<Բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ իրապես>>:[4] Սա է իսկական բանաստեղծի և նրա կոչման մասին մեծարենցյան պատգամը: <<Մեծարենցի պոեզիան մարդկային և բնության գեղեցկության մի խոր ընկալման և հաստատման պոեզիա է>>:[5]

Բնության գեղեցկությունն ու ամենանուրբ շարժումները նա արտահայտում է անձնավորման միջոցով,ինչը նրա գեղարվեստական համակարգում ընկալվում է որպես աշխարհի քնարական ճանաչման լեզվաոճական տարր:

Մեծարենցը բնութենապաշտ էր, բնության յուրաքանչյուր առարկա նրան հարազատ էր: Բանաստեղծը զգում էր իրերը, նույնանում նրանց հետ: Բնության երևույթների նկարագրությունները երբեք անկիրք ու անտարբեր չէին ,այլ միշտ առչվում էին հոգեկան վիճակների, զգացմունքների հետ:

Նոր շրջանի հեղինակները ,որոնց թվում և Մեծարենցը, չէին խուսափում նկարագրություններից: Մեծարենցը ,սակայն, չէր տեսնում իրերի լոկ տեսանելի, արտաքին կողմը ,այլ թափանցում էր նրանց խորքը և գտնում նորօրինակ, ներդաշնակ հատկություններ :

---

[3] Տե՛ս Մ.Խորենացի,Հայոց պատմություն,Երևան,1981,էջ 102

[4] Տե՛ս Մ.Մեծարենց,Երկերի լիակատար ժողովածու,Ինքնադատութան փորձ մը «Ծիածան»ին առիթով,ԳԱ,Երևան,1981,էջ 146:Այսուհետև Մեծարենցից հղումներ կտրվեն հիշյալ գրքից և կնշվի միայն էջը:

[5] Տե՛ս Էդ. Ջրբաշյան,Միսաք Մեծարենց ,Երևան,1977

Բնության ամենանուրբ շարժումների ու ձայների այսպիսի խոր ընկալումը արտահայտության ոլորտում արտասովոր ու հետաքրքիր դրսևորումներ է ստանում, ինչը չընդունվեց և անտեղի քննադատության ենթարկվեց որոշ քննադատների (Ենովք Արմեն, Տ. Չյոկուրյան, Փայլակ (Ժան Սայապալյան) և ուրիշներ) կողմից: Նշված հեղինակները քննադատում էին Մեծարենցի գեղարվեստական մտածողության ինքնատիպ ձևը, ոճական եղանակների անսովոր կիրառությունները՝ անվանելով նրան ծայրահեղ սիմվոլիստ:Օրինակ. Անիմաստ, անհասկանալի էին համարում «կապույտ հածումներ», «կ'աղոթեն ծառեր», «աղբյուրներու խմբերգն արծաթե», «տապի նոպաներ» և նման այլ արտահայտություններ: Նրանք չէին ըմբռնում, չէին կարողանում հասկանալ Մեծարենցի մտածողության յուրօրինակ դրսևորումները, որոնք պատկերին հաղորդում էին հուզականություն, կիրք, շարժում, ինչպես նաև նպաստում լեզվական և ոճական ձևերի ավելի լայն կիրառություններին: Առաջարկելով «Տապի նոպաները» փոխել « Հունիսի արև»-ով՝ Չյոկուրյանը չէր ըմբռնում, որ այդպիսով պատկերը կորցնում է իր արժեքը, գեղարվեստականությունը և դառնում է անիմաստ, սովորական[6]: Իսկ Մեծարենցը լավ գիտեր, որ գեղարվեստական պատկերներ ստեղծելու լավագույն ոճական հնարանքը փոխաբերությունն է, հատկապես անձնավորումը, որը դիպուկ և տպավորիչ է դարձնում այն կապը, այն շարժումներն ու թրթիռները, որ տեսնում էր ինքը մարդու և բնության միջև:

Քննադատների զգալի մասը, սակայն, բարձր գնահատեց բանաստեղծի ինքնատիպ ոճը , բանաստեղծական նրբություններն ու քնքշությունը, լեզվի հստակությունն ու ճոխությունը, պատկերների ուլ գույների բազմերանգությունը: Հատկապես նշեցին բնության տարբեր երևույթների, առարկաների և իրերի յուրօրինակ ընկլումն ու արտահայտման անսովորությունը. «Անով կը սկսի արվեստագետ զգայութիւնը մեր մեջ: Ան խառնվածքով և արուեստով բանաստեղծն է մեր սերունդին…Ան շնորհն ունի իրերը չտեսնելու ձևերուն հաստատուն սառույցի տակ: Գրեթե անոնց թրթռումները,անհշմարելի ծփանքները կը գտնէ դիւրավ, բոլոր այն խուսափող հեծքերը և հևքերը, որոնք չխօսեցին սովորական նայուածքիդ »[7]:

---

[6] Տե՛ս նույն տեղը,էջ 257

[7] Տե՛ս Հ. Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան,Անթիլիս,Լիբանան, 1980, էջ 422

Միսաք Մեծարենցը կիրառել է ոճական տարբեր հնարանքներ, սակայն ամենատարածված և նրա ստեղծագործությանը բնորոշ պատկերավորման միջոցը, թերևս անձնավորումն է, որը բանաստեղծի շնորհիվ իր ամենաբազմազան դրսևորումներն է ստացել արևմտահայ չափածոյում:

Ոճական այս եղանակին հայ լեզվաբանները տարբեր տեսանկյունից են մոտեցել և տարբեր տեղ են հատկացրել պատկերավորման համակարգում:Ելնելով այն հանգամանքից, որ անձնավորումը փոխաբերության տեսակ է, ոմանք չեն նշում այն որպես պատկերավորման առանձին միջոց, այլ դիտարկում են իբրև խոսքային փոխաբերություն, որի հիմքում ընկած է բառի՝ սեփական իմաստային ոլորտից այլ ոլորտի անցնելը[8]: Սա նշանակում է , որ բառը կամ բառակապակցությունը , լեզվի մեջ չունենալով փոխաբերական տվյալ իմաստը, անցում է կատարում մեկ այլ իմաստային ոլորտ՝ առարկան ավելի բազմակողմանի և գեղագիտորեն բնութագրելու համար:Այդ անցումները կատարվում են այսպես.

1. Անշունչ առարկայի հատկանիշի վերագրումը մեկ այլ անշունչ առարկայի: Օրինակ է բերվում Հովի. Թումանյանի հետևյալ քառատողը.

Ու թնդում է Թմուկ բերդը
Էն աղմուկից խնդության,
Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով հաղթական:

Առաջին կետի մեջ նշվում են նաև նյութական առարկայի հատկանիշի վերագրումը վերացական կամ իմացական հասկացություններին և ընդհակառակը::

2. Կենդանու(մարդու) հատկանիշը վերագրվում է անշունչ առարկային: Օրինակ՝

Ես լավության խոսք եմ ասում,
Որ ժպտում է մեր սրտին:
Կոշիկները կապստամբին:(Հ.Պ.)

Նշված բոլոր օրինակներն ակնարկում են անձնավորման մասին, սակայն հեղինակը դրանք չի առանձնացնում որպես այդպիսին:

Որոշ լեզվաբաններ էլ, անդրադառնալով լեզվի պատկերավորման համակարգին, խոսելով նրա արտահայտչամիջոցների մասին ,միայն հպանցիկ

[8] Տե՛սՊ.Պողոսյան,Խոսքի մշակույթի և ոճաբանության հիմունքներ,Երևան,1991,էջ39

ակնարկում են ոճական այս եղանակի մասին: Ս. Մելքոնյանը գրում է. «Գեղարվեստական մտածողության յուրահատկությունը բառական մակարդակում թերևս ուրիշ ոչ մի միջոց չի կարող ունենալ այնքան բնորոշ ու հարուստ արտահայտություն ,որքան փոխաբերության օգտագործումով, մանավանդ, որ բառի նման իմաստով գործածությունը հիմք է դառնում խոսքի պատկերավորություն և արտահայտչական միջոցներից շատերի համար և զանազան ձևերով սերտորեն առնչվում է դրանց հետ (շնչավորում,անձնավորում, մակդիր,խորհրդանիշ և այլն)»[9:]

Այնուհետև, խոսելով բառի՝ փոխաբերական նշանակությամբ օգտագործելու կարևորության մասին, ավելացնում է , որ այն գրականության զարգացման որոշ շրջաններում հեղաբեկիչ դեր է ունեցել: Բերում է օրինակներ Հովի. Թումանյանից, Ավ. Իսահակյանից, ովքեր իրենց հույզերն ու ապրումներն առավել ցայտուն ու տպավորիչ դարձնելու համար դժվարին աշխատանքի, մշակումների շնորհիվ ստեղծում են շարժուն ու խոսուն պատկերներ: Օրինակ՝ Թումանյանի «Սարերում» բանաստեղծության սկզբնական տարբերակում եղել է այսպես.

Տխուր ամպամած երկնքիցը
Մանր անձրև է շաղում:

Հետո դարձել է.

Երկինքն ամպամած, տխուր ու սև
Լաց է լինում միալար:

Այս տողերում երկնքին վերագրվել են լաց լինելու, տխրելու հատկանիշներ, որոնք հատուկ են մարդկային արարածներին: Հենց այս հատկանիշն է անձնավորման հիմք հանդիսանում:

Հայ ճարտասաններն ու քերականները տարբերակել են անձնավորման հետևյալ տեսակները.

Բարառնություն.առարկային կենդանական, մարդկային բարք է վերագրվում: Այսինքն՝ առարկաներն այնպիսի հատկություններ են ձեռք բերում ,որ հատուկ է միայն մարդկանց: Օրինակ՝

Ու կը հրճվի հոլուսահատ սիրտը:(ՄՄ,18)
Կուշանա հովն իրիկվան:(Մ Մ,50)
Կու լա սիրտս սգավոր:(ՄՄ12)

Դիմառնություն, երբ իրերն օժտվում են գործելու հատկությամբ: Օրինակ՝

[9] Տե՛ս Ս.Մելքոնյան,Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության,Երևան,1984, էջ93-95

Լույսերն կըշտապեն, կը փախչին:(ՄՄ,35)

Տենչանքներս թռան, գացին երամ-երամ:(ՄՄ,63)

Եվ ալիք մը թևը բացած կը վազե:(ՄՄ,86)

Կերպառնություն, երբ անցյալի երևույթները կամ անգո հասկացությունները կերպավորվում են: Անձնավորման այս եղանակը հատուկ է Սիամանթոյին, ում «Դյուցազնական» շարքն ամբողջությամբ կերպավորում է անցյալի ռահվիրաներին, դյուցազուններին: Օրինակ՝ «Եվ անոնք հսկայական ռահվիրաները մարմարեղեն Հույսին…աչվներեն անասելի արհավիրք մը արձակելով.. » Կամ «Ու մեռելները…հանկարծ իրենց բազուկները դեպի մեզ տարածեցին, Տարօրինակ երջանկությամբ մը երգեցին»: Մեծարենցի չափածոյում հանդիպում են տեսիլների, ստվերների անձնավորման օրինակներ՝ « Ահա կանցնի տեսիլ մ’ալ »(ՄՄ127), «Մութ ստվերներ հըպումով մը ազդու եկան ու անցան » (ՄՄ,135):

Ֆ. Խլղաթյանը անձնավորման մի տեսակ է համարում նաև **մարդաբանությունը**, երբ Աստծուն ներկայացնում են մարդկային կերպարանքով: Այս եղանակը կիրառվում է միայն կրոնական գրքերում[10]:

Ինչպես տեսնում ենք, մեր լեզվաբաններն անհրաժեշտ չափով չեն անդրադարձել անձնավորմանը՝ որպես լեզվաոճական պատկերավորման միջոցի, այլ դիտել են այն իբրև փոխաբերության իմաստային դրսևորումներից մեկը և ներկայացրել միասնաբար՝ ընդհանուր գծերով: Լեզվաբանների մի մասը ,սակայն (Լ.Եզեկյան, Յու.Ավետիսյան, Ֆ. Խլղաթյան[11]), անդրադառնալով լեզվի պատկերավորման համակարգին,անձնավորումն առանձնացնում է որպես ոճական հնարանք և դիտում իբրև փոխաբերության տեսակ: Ֆ. Խլղաթյանը գրում է «Անձնավորումը լեզվական բանադարձում է , որն հիմնված է փոխաբերության վրա և իրերին, երևույթներին, կենդանիներին մարդկային հատկանիշներ և արարքներ է վերագրում»[12]: Մենք ևս համամիտ ենք այս տեսակետին և անձնավորումը քննում ենք որպես պատկերավորման առանձին միջոց՝արտահայտման ոլորտում իր քերականական տարբեր դրսևորումներով: Ահա սրանով էլ պայմանավորված է մեր աշխատանքի կառուցվածքը, բովանդակային շերտերը: Մեր ունեցած տեղեկությունների հանաձայն

[10] Տե՛ս Ֆ.Խլղաթյան,Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու,Երևան,1970,էջ9

[11] Տե՛ս Ֆ.Խլղաթյան նույն աշխտ.,նաև Լ.Եզեկյան,Յու.Ավետիսյան,Արևմտահայ բանաստեղծության լեզուն,Երևան,2002

[12] Նույն տեղում:

անձնավորումը հիմնովին չի ուսումնասիրվել ,առանձին քննության առարկա չի եղել և մանավանդ շատ քիչ է խոսվել նրա արտահայտման քերականական կոնկրետ ձևերի մասին:

Մեծարենցի չափածոյում հանդիպում են անձնավորման գրեթե բոլոր դրսևորումները,որոնք արտահայտվում են քերականական զանազան միջոցներով՝ստորոգյալով , գոյականական և բայական անդամի լրացումներով և այլ:

Սական քանի որ ներկայացված ձևերը (բարառնություն, դիմառնություն, կերպառնություն) հատուկ են նաև գրականագիտական կարգերին և հնարավորություն չեն տալիս հստակ տարանջատել անձնավորման քերականական միջոցները, ուստի մենք փորձել ենք փոքր-ինչ հանգամանորեն ներկայացնել ոճական այս բանադարձման արտահայտության եղանակները՝ ելնելով Մեծարենցի ստեղծագործության մեջ դրանց գործածության յուրահատկություններից:

Գլուխ 2. Ստորոգյալով և բայական անդամի լրացումներով արտահայտվող անձնավորում

2.1.Ստորոգյալով անձնավորում

Ոչ անձ գոյական-ենթակայով նախադասության ստորոգյալն արտահայտվում է մարդուն բնորոշ հատկանիշ (գործողություն) նշանակող որևէ բառով: Ե'վ Մեծարենցի, և' ընդհանրապես ժամանակի չափածոյում հանդիպում են առավելապես պարզ ստորոգյալով ձևեր: Ահա <<Տապի նոպաներ>> բանաստեղծության մեջ տոթ, շոգ օրը ներկայացվում է բնության առարկաների անձնավորման օրինակներով: Վարդենին, կամուրջը, հովը, ընկուզենիները շնչավորվել են ցավել, ուշանալ, քնել, հևալ, հեծեծել բառերով. «Առանց սյուքի ու պլպուլի կը հեծե ցավն իր վարդենին »50: Վարդենին ցավում է, քանզի «Կ'ուշանա հովն իրիկվան», որը կզվարթացներ, կյանք կտար նրան: Ահա՝ բնությունը հանգստանում է. «Ընկուզիներ կը քնանան» և «Օձերը…մերթ կը հևան»(50): Այսպես շարունակվում և ավարտին է մոտենում օրը. «Տապահար դաշտավայրեր կը հագենան աղջամուղջով »

(51), իսկ «Կամուրջը կը հեծե խոնջ ու նկուն » (51)՝դաշտից վերադարձող մշակների և ձիավորների հարվածներից: Սա օրվա մի բովանդակ

նկարագրություն է, ուր ամեն ինչ՝թե'մարդը, թե' բնությունը միատարր են, միաձև:

Մեծարենցի բնության առարկաներն ու երևույթներն օժտված են մարդկային ամենատարբեր հատկություններով՝ նրանք ժպտում են, լալիս ,երազում,խոսում,քայլում,շտապում ու սպասում: Օրինակ՝«Մենավոր վարդեր, որ դեռ կը ժպտիք»(10) կամ «Հյուղակն ծառերու դեմ կը խնդա» (109)՝տեսնելով չարաճճի հովի խաղը ծաղիկների հետ, լսելով նրա երգը: Գարուն է , հյուղն ուրախ է, իսկ բանաստեղծի մտքից «Կոհակ մը հեղակարծ հանդարտ կը պառկի»(109): Գարունն ու արևը, սակայն, չեն մոռանում իրենց սիրահարին և առնում են իրենց «մետաքսահյուս» ցանցի մեջ,ուր կանչում է «բաղձիկ թռչնակն»իր հոգու: Մեծարենցը ստեղծում է պատկերներ, որոնք ազդում են, խորհելու տեղիք տալիս :Ահա՝<<Հյուղն աներազ կու լա ժպիտ մը դաժան>>(111) :Լալիս է ,որովհետև աշուն է գալիս, և վախ կա ,որ ամեն ինչ մեռնելու է :Այս վախը, բայց և այնպես, լուսավոր է , չէ որ ամեն ինչ մեռնելու է՝ գարնանը նորից վերածնվելու հույսով:Ահա լուսավոր թախծի մեկ այլ օրինակ.աստղերը <<Իրենց վիշտը միշտ կու լան>>(17) <<լույս արցունքով տխրամած>>(17): Բնության կենդանի շնչի և երևույթների անձնավորման կատարելություն է <<Ջրտուք>>բանաստեղծությունը: Բայ-ստորոգյալով արտահայտված ձևերը խոսքին հաղորդում են ռիթմ և մեղեդայնություն:Լուսնակ գիշերում մենք ականատես ենք լինում բնության մի հրաշալի պահի,երբ <<Հակուրջի մը առկախած գյուղակն անդին կ'օրորեն Անրջական հյուսվածքով խումբ մը ժայռի ըստվերներ,Ցանքին բակը կ’աղոթեն հսկա ծառեր տարորեն՝Որոնց տամուկ շուքին մեջ Աստվածամարն է կայներ>>(94): Ստվերներն օրորում են գյուղը, ծառերն աղոթում քահանաների նման: <<Ու գյուղակին դեմ նստած,երիտասարդ ու պչրոտ,Պարտեզները՝ վերեն վար վազող ջուրին կը սպասեն>>(194):Այս տողերում պատկերված է սպասման պահը.ինչպես պատանիներ՝ պարտեզներն էլ սպասում են իրենց սիրեցյալին,որ նոր սիրով ու աշխույժով լցվեն,նոր կյանք և ուժ ստանան: Մինչ <<պչրոտ պարտեզները >> սպասում են ջրին, ծառերն իրենց աղոթքն են անում:Սպասման ժամին հաջորդում է ցնծության պահը՝երջանկությամբ լեցուն:Առուն հասել է ցանկապատին՝անձկալի վայրկյան. <<Սյուք մը կանցնի ,տերևները ծափ կը զարնն ցնծագին.Վարեն ջուրը կը խայտա,կը խնդա լույսն ալ վերեն>>(194):Թվում է ,թե վերածնվում է բնությունը:Մանուկների ցնծագին ծափի ձայնը խառնվում է ջրի,հովի և լուսնի

խնդությանը:Առարկայական ,բայց նուրբ է պատկերը,երբ ջուրը կյանքի է կոչում <<վարդենիքը, թըթստանը և ածունները բոլոր>>,իսկ <<Բահի երկու շարժումով նայիս առուն կը թեքե.օձաճապուկ ձևերով հեղուկ իրանն իր ոլոր>>(95):Անձնավորված այս պատկերներին ձուլված է ապրումը, զգացմունքը,որն ավելի հուզականություն է հաղորդում բանաստեղծությանը:Բահերի խուլ հնչողությանն ու ջրի ընթացքին միանում է աղջկա երգը,որ հոգնաբեկ մշակին ու գյուղին օրոր է թվում:

Մեծարենցն իր տաղանդի ու նուրբ ցգացողության շնորհիվ կարողանում է ամենասովորական բառերով ստեղծել անձնավորման օրինակներ,որոնք, սակայն, սովորական կամ կրկնված չեն դառնում:Երևի այստեղ է թաքնված այն մեծ գաղնիքը, որ Մեծարենցին դարձնում է անգերազանցելի: Նա զգում է իրերն ու երևույթները ,վեր հանում նրանց թաքնված,չբացահայտված հատկանիշներն ու այլ լույսի տակ ներկայացնում դրանք: Բանաստեղծի այս ունակությունները զգացել ու գնահատել է <<Արևելյան մամուլը>>: Թերթը նկատեց, որ Մեծարենցը ժամանակն ու իրերը ներկայացնում է ոչ թե այնպես,ինչպես դրանք կան, այլ ինչպես ինքն է ընկալում դրանց թաքուն իմաստը,<<անոնց հոգին>>[113]: <<Գարնան հյուղը>> քերթվածքում նկարագրվում է գարնան գալուստը: Հյուղակը ողողված է կանաչով <<Մեխակի հույլ մ'աչվներեն Կը ժպտերգեն հյուղին հրճվանքն անապակ>>(107) <<Ծորակին մեներգն կը վազե>>(107):Այս կենդանի բնությանն է ուզում միանալ <<Գաղջ ավիշն՝որ կը պոռթկա>>(107):Բնապաշտ բանաստեղծն իր ցայտուն դրսևորումն է գտնում <<Ի~նչ արբեցությամբ >>բանաստեղծության մեջ: Ահա՝<<Ի~նչ արբեցությամբ…ծառեր կըմպեն կյանքի հորդ ճաճանչ>>(131)կամ << Ի~նչ արբեցությամբ ..Ամենմեկ բլրակ՝իր կանաչ ճակտին կը կապե երփնած ծաղիկե նարոտ>>(131): Բանաստեղծի հիացմունքը նրան հասցնում է մինչ բնապաշտական այն միտքը,որ Աստված ամենուր է ,բնության յուրաքնչյուր երևույթի մեջ.<<Աստված ՝որ եկավ ՝ չես գիտեր ուրկե>>(131):

Հ. Օշականը նկատում է, որ եթե Մեծարենցն իր ներաշխարհով հավատարիմ է ինքն իրեն ,ապա արտահայտության պլանում նա հասնում է կատարելության :Եթե իր սիրտն ամաչկոտ է,համր է, ապա բառերը նրա փոխարեն վերջնական տեսք ու գույն են տալիս քանդակներին[1]:Բերենք ստորոգյալով անձնավորման մի քանի օրինակներ.<<Եվ ալիք մը թևը բացած կը վազե Գրկել ափունքն իղձս ոսկի

[13] Տե'ս<<Արևելյան մամուլ>>,1907,թիվ29, էջ 697

ավազե>>(86),<<Երազներու պերճուհին է ,որ կ'անցնի, Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար>>(86)<<Եվ իրարու կը ժպտին Լճակն այն լեղակ ու ծովակն հոգվույս>>(163),<<Խաղաղ ձյունը կը լսե>>(166) և այլն:

Ի տարբերություն պարզ ստորոգյալների առատության `սակավաթիվ են ***բաղադրյալ ստորոգյալով*** անձնավորման ձևերը: Բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին համապարփակ ,ամբողջական հատկանիշ է արտահայտում:Այն հիմնականում դրսևորվում է ածականով:Ինչպես. <<Իրիկունս է բարի~, բարի~>>(127),<<Հուշիկ փափչող իրիկվան լույսն է զվարթ>>(48)կամ <<Համակ իրերն հարցումներուս հանդեպ խուլ են>>(45) և այլն:

2.2.Բայական անդամի լրացումներով արտահայտվող անձնավորում: Անձնավորումն անշունչ առարկաներին մարդկային բարք է վերագրում բայական անդամի լրացումների (խնդիր,պարագա) օգնությամբ:Այս միջոցը թույլ է տալիս թափանցել բնության երևույթների խորքը`ներարկելով նրանց շունչ ու հոգի:

Խնդիրներ: Անձնավորան քերականական արտահայտության մեջ իրենց կարևոր դերն ունեն խնդիրները:Պետք է նշել,որ խնդիրները կարող են անձնավորել և ' իրենց ,և' ենթակային[14]: Առաջին դեպքում անձի առում ենթակա ունեցող նախադասության ստորոգյալն արտահայտում է միայն մարդուն բնորոշ գործողություն կամ այնպիսի գործողություն, որ մարդու նկատմամբ է կատարվում,մինչդեռ գործողության քերականական <<առարկան >> ոչ անձ է:Նման օրնակներ շատ հազվադեպ են հանդիպում: Ահա `<<Ու լըսեի ես ցայգուն>>(115),<<Ու ջամբեի ես ցայգուն>>(115):Այս օրինակներում <<լսեի>>և <<ջամբեի>> բառերը <<ցայգուն>>խնդիրն անձնավորել են իրենց բառային իմաստի շնորհիվ:

Երկրորդ դեպքում խնդիրն արտահայտվում է մարդուն վերաբերող կամ նրա հետ առնչվող գոյականով,որն էլ անձնավորում է ենթական: Օրինակ`<Աղջամուղջին մեջ գիշերը կ'երազե Պայծառ այգուն վառ շուրթերը կեռասե>>(13) կամ <<Կը խրկե հովիկն ինձ համբույրն իր մտերիմ>>(45):Այս օրինակներում գիշեր և հովիկ բառերն անձնավորվում են շրթեր և համբույր խնդիրներով,որոնք հանդես են գալիս փոխաբերական իմաստներով:

<<Հովը>>Մեծարենցի բանաստեղծություններում տարբեր կերպարանք է ընդունում.մեկ բերան է ,որ համբուրներ է բերում,մեկ չարաճճի աղջիկ է ,մեկ էլ

[14] Տե'ս Յու. Ավետիսյան,Արևմտահայ բանաստեղծության լեզուն,Երևան,2002,էջ406

մանուկ է, որ խուսափելով բանաստեղծից՝փախչում է, վազում և երբ փորձում ես բռնել <<Ծա'չ,ապտակ մը կը զարնե>>(20): Այս <<չարաճճի >> հովը սահմաններ չի ճանաչում:Ահա մեկ ուրիշ պատկեր <<հովը պոնդեր կու տա տամուկ գիշերին>>(160):Ուրեմն հովը կարող է ոչ միայն ապտակել,այլև ուժգին հարվածել: Խնդիրները խոսքին հաղորդում են առարկայական կոնկրետ իմաստ, հանդես գալիս ընդհանրական իմաստի խտացված նշանակությամբ:Ահա.<<Հընամի ծառեր ..կ'արտածորեն ժպիտներ>,(44)<<Շրթունքները անթիվ իղձեր կը թոթվեն>>(46),իսկ<<Բիլ եղրևանին տրտմություն մը կը ցանե>>(46) կամ <<Հոգվույս համար ,որ կ'երազեր գգվոտ ու մեղմ շունչն հարավի>>(60):

Ինչպես տեսնում ենք ,ուղիղ խնդիրներով անձնավորումը գործուն ոճական հնարանք է Մեծարենցի չափածոյում և այն հիմնականում արտահայտվում է հասարակ գոյականներով:

Պարագաներ: Ոչ անձ գոյականով արտահայտված ենթական անձնավորվում է նաև պարագաների միջոցով:Պարագաները ցույց են տալիս մարդու գործունեությանը բնորոշ կամ նրան առնչվող հանգամանքներ:Ավելի հաճախ հանդիպում են ձևի պարագայով անձնավորման օրինակներ՝<<Հեշտություն մը կապույտի հանդարտորեն կը ժպտի>>(33),<<Մարած է լույսը լամպիս..հևալեն տրտում>>(56) և այլն:Պարագաներով արտահայտված անձնավորոման իրողությունը, հատկանիշը բնութագրում է առավել հստակ, դիպուկ ու ճիշտ: Ահա՝ <<Կ'իջնե ձանձրույթն հանդիսավոր ու տրտում>>(36): <<Տրտում>> բառը բացի այն, որ անձնավորում է արտահայտում, շեշտում է նաև քնարական հերոսի հոգեվիճակը:Կամ՝<<Գիշերն տխուր կը խոկա>>(27),<<Հովը կ'ոռնա խուլորեն>>(57):Ձևի պարագան ուղեկցվում է բայ-ստորոգյալի անձնավորմամբ՝<<Գոտի հյուսե.. գետին վրա ՝որ կը վազե հըռնդալեն ու հևալեն>>(84),<<Նոր տարին առտվան լույսին կը սպասե տենդոտ>>(23) և այլն:

Հազվադեպ,սակայն հանդիպում են նաև տեղի պարագայով անձնավորման օրինակներ.<<Հանբուրներ կու գան հովեն ու ծովեն>>(28) և այլն :Նկատվում է ,որ ձևի պարագաներն արտահայտվում են հիմնականում ածականով, իսկ տեղի պարագաները՝ հասարակ գոյոկաններով:

Գլուխ 3. Գոյականական անդամի լրացումներով արտահայտվող անձնավորում:

Անձնավորումն արտահայտվում է նաև *գոյականական անդամի լրացումներով (որոշիչ, հատկացուցիչ,բացահայտիչ),*որոնցից ամենալայն կիրառություն ունի որոշիչը:

3.1.Որոշչով անձնավորում: Որոշիչը նախադասության գոյական կամ գոյականաբար առնված այլ խոսքի մասով արտահայտված որևէ անդամի որակական ,վիճակային կամ նման հատկանիշներ արտահայտող լրացում է[15]: Որոշչով արտահայտված անձնավորունը շնչավորում, մարդկային հատկանիշներ է վերագրում որոշյալին:Գոյականական անդամի այս լրացումն արտահայտվում է հատկանշային իմաստ արտահայտող տարբեր խոսքի մասերով և դրանց բնորոշ յուրահատկություններ հաղորդում անձնավորմանը:

Ա.Ածական:Որոշչի պաշտոնում ամենաշատ կիրառություն ունի ածականը՝իր իմաստային տեսակներով՝որակական և հարաբերական: Օրինակ<<մռայլ տենչեր>>(33), <<մենավոր վարդեր>>(40): Վերջինս դիպուկ է արտահայտում բանաստեղծի հոգեկան վիճակը:Ծուրջբոլորը թրթռում են լույսերը ,ժպտուն <<հոգու մռայլ տենչերին>> և այդ պահին ծագած սիրո <<դողդոջուն հուշեր>>(33)-ը բյուրեղյա զգացում են արթնացնում նրա ցավոտ հոգում:Բանաստեղծին շրջապատող բնությունը գեղեցիկ է՝ <<շափյուղազարդ երկինք>>,<<նրբին արահետներ>>(34),ուր թափվում են նրա նույնքան հուրբ ու ականակիտ երազները:Այս բնապատկերին հաջորդում է զգացումը:Բանաստեղծը տագնապում է և չի ուզում տառապել այլևս՝<<պրպտելով անրջանքի ծաղիկը մտերիմ>>(34): Մեծարենցի սիրած բանաստեղծական ձևն է սա, երբ բանաստեղծության մեջ <<զգացումին ընկերակցող տեսարան մը կա,և կամ տեսարանեն վերջ զգացումը կու գա>>[16]: Բանաստեղծն իր մանկությունն անց է կացրել բնության գրկում,ազդվել նրանից, զգացել նրա ամենաանսովոր շարժումները և թաքնված հատկությունները: Նա իրիկվա գեղեցկությունը տեսնում է ոչ միայն նրա գույների,բուրմունքների և նվագների մեջ, այլև նրա <<աշխատելու>> կարողությոան մեջ՝<<խոնջ իրիկուն>>(45): Խոնջ բառը սկզբնական տարբերակում չի եղել, բայց հետո ավելացնելով այս մի բառը՝փոխել է բանաստեղծության տրամադրությունը: Որոշչով անձնավորումն արտահայտում է հույզ, ապրում:Մարդկային այս հույզերը զգում է բնությունը և հաղորդակից դառնում նրան, շնչում ու ապրում նրա հետ: Օրինակ՝ <<Երջանիկ

[15] Տե՛ս Ա.Պապոյան,ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն,Երևան,2003,էջ 115

[16] Տե՛ս Ինքնադատության փորձ մը <<Ծիածանին առթիվ>>,էջ167

վաղորդայններ>>(69),<<Առտուն անխռով>>(43)<<սարսռուն էջ>>(136): Էջը սարսռուն է ,որովհետև անհուն հիշատակներ ունի,իսկ հիշատակը <<անձայն,բայց խոսուն >>(136) ձոն է շիտակ սրտերի համար: Վերջին որոշիչները `հակադիր ածանցների միջոցով ստեղծել են ոճական մի բանադարձում ,որ կոչվում է *օքսիմորոն*: Նույն այս <<սարսուռ>> բառը, գործածելով <<ջութակ>>գոյականի հետ, բնութագրում և անձնավորում է այն, ինչպես նաև սիրո հոգեկան այն ապրումները, որոնք անմիջական,վառ ու անկեղծ լինելուց բացի, համեստ ու անհավակնոտ են. <<Երբոր ճամբեն կ'անցնի հըպարտ լուսաբաց,Բան մը սրտես կ'ըլլա բոցին պատարագ..Ու երբ կ'երգե ջութակին հետ սարսռուն ..Կարծես աչքերն իր լուսափաղփ կը նային>>(74):Մեծարենցն աշունը պատկերում է հերարձակ աղջկա տեսքով`<<Պատուհանըս մատնահարեց ու անցավ Հովն հերարձակ աշունին>>(20):Սպասման հիվանդը <<լույս պայծառ տիվին տակ>>հաշվում է <<առույգ սիրո երազի>>(61) զարկերը և շտապեցնում <<ծաղկանույշ հիրիկին>>,որ գա, ժպտա իրեն, ջերմացնի հոգին, քանզի <<կը մրսին հեք երազներն որբուկ>>(61):Որբացած երազներով բանաստեղծն անցնում է <<մենավոր կածաններով>>`զգալով մահվան սրսփուքը: Միսաք Մեծարենցը խոսքի, բառի,ձևի մեծ վարպետ է:Ածականական որոշիչներով արտահայտված բառերը,որոնք կազմվել են տարբեր ածանցներով(-ոտ,-ավոր,-ավուն, ուն,-ին-վերջածանցներ,-ան, -տժ նախածանցներ, ի դեպ վերջինով միայն մի բառ է հանդիպում`<<տժգույն վարդեր>>(24),անձնավորումն ավելի ցայտուն են արտահայտում: Ահա`<<Շիկնոտ իղձ>>(168),<<պչրոտ պարտեզներ>>(94),<<Հևքոտ ծով>>(158),<<Երկչոտ քայլեր>>(176),<<Ալ հոգնած եմ անցնելեն կածաններե մենավոր>>(61),<<Ձեռքս է պարապ մընացեր դարակին մեջ սըգավոր>>(61),<<նրբին արահետներ>>(134),<<Անշըշուկ իրիկուն>>(84),<<Անփույթ իրեր>>(45):

Շատ հաճախ որոշչով մարդու բնավորության,խառնվածքի գծեր են վերագրվում բնությանը,անշունչ առարկաներին: Օրինակ`<<Սիրտս սեգ>>(21),<<Հպարտ գնացք>>(86),<<բարի արև>>(70),<<Դաժան ժայռ>>(175),<<Հպարտ շուշան>>(92):Վերջին օրինակում տեսիլ-աղջկա մարմինը համեմատում է <<հպարտ շուշանին>>,նրա նման ճերմակ ու լուսավոր:Ածականով արտահայտված որոշիչները ոչ միայն հոգեկանացնում են առարկաները,այլև խոսքը դարձնում են պատկերավոր, գունեղ ու տպավորիչ: Բերենք ևս մի քանի օրինակ Մեծարենցի չափածոյից,որն այնքան հարուստ է

նման դրսևորումներով: Այսպես՝<<Սակավարյուն շափրուկներ>>(121),<<Ուղեմոլար մեղուներ>>(64),<<Մռայլ ուրվական>>(187),<<Դողդոջուն ծիածաններ>>(135) և այլն:

Բ. Որոշիչը կարող է արտահայտվել նաև **Գոյականով**՝<<Մարգարե երիցուկ>>(91),<<Ջրանիվներ ծերունի>>(39),<<Մայր թփեր>>(120):Սա մայրական գորովանքի նուրբ նկարագիր է,երբ հովը մանկան նման փարվում է թփի քղանցքներին ,նա մայրանում է, լցվում մայրական անկեղծ սիրով:

Գոյականը որոշչի պաշտոնում հանդես է գալիս նաև հոլովված ձևերով: Օրինակ՝<<Երազանքնին կիսատ թողած,գինով գինով վարդերն ինկա~ն>> (50):Գործիական հոլովով դրվող գոյական որոշիչները ցույց են տալիս անձի կամ իրի՝մի բանով օժտված լինելը,մի բան կրելը:Ինչպես նկատում ենք ,նշված օրինակում առաջին բառը՝գինով ,գործածված է հասարակ գոյականի իմատով,որը դրսևորվել է գործիական հոլովով և պատճառական իմաստ է արտահայտում,իսկ երկրորդ բառը,որն անձնավորել է վարդեր որոշյալը,գործածված է հարակատար դերբայի իմաստով՝այսինքն արբեցած,գինովցած վարդեր:Այս երկու ձևերի զուգահեռ գործածությամբ հեղինակը ստացել է շատ հետաքրքիր և ինքնատիպ անձնավորման օրինակ:

Մեծարենցի լեզվաոճական համակարգում իրենց ուրույն տեղն ունեն ժողովրդա-խոսակցական բառերը,որոնք ստեղծում են համապատասխան միջավայր: Ինչպես օրինակ՝ <<Հարս հովիտեն՝կարմրորդանի Կ’առնե արագիլն իր դարձին կարոտ>> (131),<<Սյուքն աղջնակ՝որ հյուսիսեն կը քնքշանա հոգվույս վրա >>(127) և այլն: Գոյականական որոշիչները, ի տարբերություն ածականների ,առավել ուժեղ են բնութագրում առարկաներն ու երևույթները:

Գ.Հարակատար դերբայով անձնավորման հետաքրքիր օրինակ է հետևյալ տողը.<<Այս գիշեր հագված,սգված նոր տարին>>(16):Նոր տարին պճնված՝տենդոտ սպասում է առավոտին,որ աշխարհ գա նոր հույսերով,նոր իղձերով պարուրված:Իսկ <<սգված>> բառը ,որ, կարծես, դուրս է բանաստեղծության ընդհանուր տրամադրությունից, արտահայտում է մթության գաղափար այն առումով,որ դեռևս սպասում է և լույս աշխարհ դուրս չի եկել,որպեսզի վայելի կյանքի բերկրանքը:

Ենթակայական դերբայով արտահայտված որոշիչներ՝<<Փախչող իրիկուն>>(48),<<Փախչող լույսեր>>(186),<<Վազող ջուր>>(94),<<Փախչող ասուպ>>(94) դերբայն ավելացել է հետո՝փոխարինելով <<կոթուն>>

բառին:<<Ան իմ սիրտն է >> բանաստեղծությունը մեկն է այն բազմաթիվներից, որտեղ բնության նկարագրությունն ու հերոսի զգացմունքները հաջորդում են իրար:Մեծարենցն այսպիսով բացատրում է բնության և մարդու սերտ կապը: Գիշերը զգում է նրա տխրությունն ու թախիծը, և բանաստեղծին թվում է ,թե<<Աշնան գիշերը լացող>>(160) իր սիրտն է: Հերոսն իղձ ունի ազատվել ձանձրույթից և իր <<հիվանդ հոգին>> պարուրել լույսերով, ջրի կարկաչով և <<Երգող սյուքի>>(126) քաղցրությամբ,որն այս ամբողջության մեջ ուրախության և երջանկության խորհուրդն ունի:

Ինչպես տեսնում ենք ,դերբայներով արտահայտված որոշիչներն, ի տարբերություն ածականների և գոյականների,շատ քիչ են գործածված Մեծարենցի չափածոյում:

3.2.Հատկացուցիչով անձնավորում

Ոչ անձ-գոյական հատկացուցիչն անձնավորվում է իր բառային նշանակության մեջ անձին բնորոշ հատկություն արտահայտող բառով՝հատկացյալով,որը գրեթե միշտ դրսևորվում է հասարակ գոյականով:Օրինակ՝<<Կը սրսըփա ցավը լույսին,որ չի~ծագեր>>(102),<<Հապօ~ն, անցի~ր ,ծըծե հեշտին համբույրն անույշ լելակներուն>>(84) կամ <<Հորիզոնեն վար լույսի պար մը կ'իջնե>>(18),<<Զոր գիշերվան անտես ձեռքեր>>(52):Վերջին օրինակի նախնական ձևը եղել է .<<Զոր գիշերվան մութ ստվերներ>>: Մշակման ենթարկվելով՝անձնավորել է ոչ անձ գոյական գիշերը: Նկատելի է, որ Մեծարենցը հաճախ է փոփոխում բանաստեղծության այս կամ այն տողը կամ բառը՝փոխաբերականությունն ու անձնավորումը շեշտելու համար:Սա գալիս է բանաստեղծի ոճական նպատակադրումներից և հատկապես գեղարվեստական մտածողությունից:

Հատկացուցիչ հատկացյալի արտահայտված անձնավորումը տեսանելի է դարձնում պատկերը՝ընդգծելով նրա մարդկային բնույթը:Ահա՝<<Իր չըփույթին մեջ կը շիկնի աղջիկն արշալույսի>>(60) կամ <<Վերջալույսի աղջիկ>>(61):Այսպիսի բնորոշումները Մեծարենցի բանաստեղծություններում հաճախ են հանդիպում՝<<Կու գան կույսերն իմ անուրջիս>>(75),<<Կույսն այգուն>>(21),<<Լճին կույսը խաժակ>>(102) <<Երազներու պերճուհի>>(86):Հատկացյալի փոխաբերական իմաստի արտահայտման համար հենարան է դառնում հատկացուցիչը: Ահա՝<<Հոյհո~յ, առուն հորդառատ դալարին ծոցն է նետվեր>>(94):Պատկերը կենդանի է ,աշխույժով լեցուն:Դաշտը,

կանաչը առուն ընդունում են իրենց գրկում, ինչպես հարազատի,ապրում նրանով և կյանք տալիս ուրիշներին:Բերենք մի քանի օրինակ ևս՝<<Հապօ~ն ,անցիր, ծըծիր հեշտին համբույր անուշ լելակներուն>>(84),<<Կը սրսըփա ցավը լույսին,որ չի ծագեր>>(102),<<Լուսե արցունք մոմերու՝որոք հանդարտ կը մաշին>>(48),<<Աղաղակ մը սիրածուփ՝ սահած ծոցեն դաշտերու>>(69) և այլն:

3.3.Բացահայտիչով անձնավորում:Որոշչից ու հատկացուցիչից բացի անձնավորումը կարող է արտահայտվել նաև բացահայտիչով,սակայն անձնավորման այսպիսի դեպքեր շատ քիչ են հանդիպում:Ահա՝<<Տենչանքներս ,տարագնացիկ մեղուներ>>(63):Այս օրինակում վերացական հասկացություն արտահայտող բացահայտյալն անձնավորվել է թանձրացական հատկանիշ արտահայտող բացահայտիչով՝ինչի շնորհիվ նրանք շարժվելու ,թռչելու հատկություն են ձեռք բերել: Բանաստեղծն անձնավորման օրինակ է ստեղծել՝ընդհանուր հատկանիշ տեսնելով շուշանների և կարապների միջև.<<Ու պորերը՝խոշոր շարժուն շուշաններ>>(107):

Բացահայտիչով արտահայտված անձնավորումն ընդգծում է այս կամ այն գաղափարը, երևույթը կամ հասկացությունը:

Գլուխ 4.Կոչականով անձնավորում:

Անձնավորումն արտահայտվում է նաև կոչականով: Անձնավորման հիմք է հանդիսանում կոչականի և նախադասության մյուս անդամների իմաստային ընդհանրությունը: Հեղինակն անշունչ առարկաներին դիմում է իբրև շնչավորի,զրույցի բռնվում նրանց հետ,պատմում իր ապրումները և օգնություն ու սփոփանք ակնկալում:Ոճական այս հնարանքը հարազատ է Մեծարենցին ,քանզի իր շրջապատում մտերիմներ չգտնելով՝բանաստեղծը մխիթարություն է փնտրում բնության մեջ՝կիսելով իր խոհերը ծաղկի,լուսնի և գիշերվա հետ:Ահա՝<< Ո~վ դուն հիրիկ ծաղկանույշ>>(61):Մեծարենցը բուրավետ և գեղեցիկ այս ծաղկին օժտում է մարդկային հատկանիշներով, և դիմում նրան ինչպես սիրելիի, խնդրում կենդանացնել իրեն՝ լուսաբաղձ հիվանդին,որ տանջվում է որբացած երազների և մահվան սարսափի մեջ:Սակայն մեկ այլ բանաստեղծության մեջ անհուսության վայրկյանին ինքն է խեղդում ծաղկին և մենախոսում՝<<Հե~ք ծաղիկ, զոր խեղդեցի վարկյանի մը մեջ անհույս>>(91):Կերպառնության օրինակով ստեղծել է անձնավորման հետևյալ օրինակը՝<<Փնտռեցեք այս տղան ,ու՞ր եք,ո~վ սուրբեր>>(189),<<Ա~հ քուկդ եմ արդեն,ո~վ միստիք ցնցում,Ո~վ ձայն,մինչ ուժգին հոգվույս կը փարիս>>(56):

Մեծարենցի չափածոյում հաճախ են հանդիպում այնպիսի ստեղծագործություններ, որտեղ կոչականով արտահայտված անձնավորումը հիմք է դարձել ամբողջ ստեղծագործության ոճավորման համար:Այդպիսիք են `<Սիրերգ>>(180),<<Լուսնակ քուրիկիս>>(128),<<Ձնռան պարզ գիշեր>>(30) և այլն:Վերջին բանաստեղծության մեջ զգացվում է վիրավոր սրտերի և գիշերվա խորհրդավոր կապեր,երբ բանաստեղծը դիմում է նրան .<<Համբույրիդ, գիշեր, պատուհանս է բաց..>>(30) կամ ցանկանալով մխիթարանք, հանգիստ գտնել գիշերվա գրկում ,խնդրում է .<<Ցնորաբե~ր գիշեր,ա~հ, ընդունե' զիս, Ընդունե~,միստիք ,ո~վ անդորրություն,Իմ աղերսակոծ շնչիս սոսավյուն>>(30):

Դիմելով լուսնակին`գանգատվում է ,պատմում վիշտը<<Երեկ գիշեր մոռցել էիր, Լուսնա~կ,գիտես>>(128):Իսկ գիտեք ի՞նչ էր մոռացել`նրա համեստ պատուհանը: Մեծարենցն ունի մի շատ գողտրիկ բանաստեղծություն,որն արևին ուղղված պաղատանք է.<<Ծողա~,շողա~բարի արև ,հիվանդ եմ..>>(70):Խնդրում է, որովհետև հնարավոր է այլևս չտեսնի նրան և չզգա նրա այնքան կաթոգին ու խանդաբորբ ջերմությունը:

Գլուխ 5.Անձնավորման այլ ձևեր:

Անձնավորումը ,բացի նշված քերականական ձևերից ,ունի նաև արտահայտման այսպես կոչված *գաղափարային-բովանդակային* կողմեր:Դրանցից են `

Ա.*Մի տեսակի անշունչ առարկայի հատկանիշի վերագրումը մեկ այլ անշունչ առարկայի:* Օրինակ`<<Խրճիթն ալ պիտի մխա օրեօր>>(27), <<Բայց լույսն իմ հոգվույս քիչ-քիչ կը մաշի>>(31),<<Խարույկի մը պես `որ վաղ է մաշեր>>(47): Փոխաբերությունը տեսանելի է դարձնում հուզումը և այն նմանվում է վաղուց հյուծված, մաշված բանաստեղծի հոգու ցոլքերին: Պատկերի առաջին տարբերակը անձնավորման օրինակ համարել չի կարելի,որովհետև այնտեղ փոխաբերություն չկա`<<Խարույկի մը պես `որ վաղ է մարեր>>:Բայց հետո մեկ բառի փոփոխմամբ խոսքը դարձել է փոխաբերության և անձնավորման վառ օրինակ:Մեծարենցը նշված իմաստով շատ է գործածել << մաշվել >> բառը,սակայն յուրաքանչյուր բառակապակցություն իր համատեքստում յուրօրինակ պատկեր է ստեղծում: Ահա`<<Լուսե արցունք մոմերու`որոնք հանդարտ կը մաշին>>(68),<<Ցայգն համորեն կը մաշի>>(32)

Բ.*Բնության մեկ առարկայի հատկանիշի վերագրումը բնության մեկ այլ առարկայի*: Այս դեպքում անձնավորումն իրականացվում է բնության

երևույթների << նմանության >> հիման վրա:Այս տիպի անձնավորման օրինակներ քիչ չեն հանդիպում ,բայց հստակ չեն նրա սահմանները:Բերենք օրինակներ՝<<Ուր ցաները կը վետվետին սիրատարփ>>(69)<<Մանիշակ գոլորշիներուն մըշուշն անապակ Կը ծաղկի թրթռուն Ծովերուն վրա>>(72)<<Լուսնի լույսը ծառերեն ծաղիկի պես է կախվեր>>(91),<<Այգն է ծաղիկ երազով լի և բալաձիգ թեթևորեն>>(60),<<Արծաթ լույսերն տակավ կը ծաղկին>>(80),<<Մինչ բուրմունքներդ իմ հոգվույս մեջ կ'ամպանան>>(77) կամ <<Քերթված մըն է ցայգն համորեն, Որ կ'երփներգե ծափ ու ծիծաղ ու ծաղիկ>>(81): Ամպանալ, երփներգել բառերը Մեծարենցի ստեղծած նորակազմություններից են և հիշյալ կապակցություններում գործածվել են նոր, անսովոր իմաստներով:

Ինչպես տեսնում ենք Մեծարենցի գրչի շնորհիվ անձնավորումը ստացել է բազմազան և բազմապիսի դրսևորումներ: <<Մեծարենցը ամենից առաջ ձևերու կախարդ որսորդ մըն է,որ հավասար խանդաղտանքով կը մօտենա իրերու բոլոր ստեղներուն>>[17]:

ՎԵՐՋԱԲԱՆ

Արդեն նշել ենք, որ քսաներորդ դարի արևմտահայ չափածոն բնորոշվում է փոխաբերության արտահայտման ամենաբազմազան եղանակներով, քանզի ոճական այս դարձույթը դարասկզբի հեղինակների, հատկապես Մեծարենցի համար, դարձել էր աշխարհընկալման, գեղարվեստական մտածողության ինքնատիպ ձև: Մեծարենցի բանաստեղծական խոսքը գեղավերստական պատկերներն անհնար է պատկերացնել առանց փոխաբերության, առանց անձնավորման: Նրա ամբողջ գրական ժառանգության մեջ չկա մի բանաստեղծություն, որում գործածված չլինի անձնավորման այս կամ այն

[17] Տե՛ս Հ. Օշական նշվ. աշխ. էջ

տեսակը: Ճիշտ է, նրա առաջին շրջանի բանաստեղծությունները դեռ թույլ են, տպավորական-նմանողական, և անձնավորումն էլ դրսևորված է արդեն հայտնի և շատ գործածությունից սովորական դարձած ձևերով: Օրինակ՝ <<Կը հրճվի սիրտը>>(18), << Կուլա սիրտս սըգավոր>>(22), <<Անձրևի հորդ արցունքներ>> (22) և այլն: Շատ անգամ էլ ներկայացված են չապրված զգացմունքներ և հույզեր,որոնք կաղապարվել են արհեստականորեն: Սակայն հետագայում նա աշխատեց շտկել հիշյալ թերությունները և հաջողեց:

Ուսումնասիրելով անձնավորումը Մեծարենցի չափածոյում՝ մենք եկել ենք հետևյալ եզրակացության.

1. Բաղադրյալ ստորոգյալի համեմատությամբ շատ ավելի գործածական է պարզ ստորոգյալով անձնավորումը, ինչը Մեծարենցի ստեղծագործության առանցքային մասն է կազմում:
2. Գոյականական անդամի լրացումներից ամենալայն կիրառություն ունի որոշիչը, որտեղ ածականով արտահայտված ձևերը քանակով գերազանցում են մյուսներին:
3. Գործուն է նաև կոչականով և բայական անդամի լրացումներով անձնավորումը:
4. Մեծարենցը չի սահմանափակվել միայն անձնավորման արտահայտման քերականական միջոցների գործածությամբ, այլ կիրառել է նաև անձնավորման գաղափարային-բովանդակային ձևերը:
5. Եվ վերջապես,եթե սովորողը ուսումնասիրել և յուրացրել է լեզվական նյութը, կկարողանա դուրս բերել անձնավորման օրինակները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Յու., Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Երևան,2002:
2. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան,2003:
3. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական տերմինների բառարան-տեղեկատու, Երևան,1976:
4. Խորենացի Մ., Հայոց պատմություն, Երևան,1981:
5. Մելքոնյան Ս., Ակնակրկներ հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 1984:
6. Մեծարենց Մ., Երկերի լիակատար ժողովածու, ԳԱ, Երևան, 1981:
7. Պապոյան Ա., ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան 2003:
8. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1991:
9. Ջրբաշյան Էդ., Միսաք Մեծարենց, Երևան,1977:
10. Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Անթիլիաս, Լիբանան, 1980, հտ.9: